

ՀՃՇրջակա միջավայրի վրա ազդեցության

Գնահատման հաշվետվություն

/Լրամշակված/

ՀՀ Արարատի մարզ, համայնք Արտաշատ, գյուղ Մխչյան 11/1
հողամաս հասցեում ջերմոցային տնտեսություն կառուցման
աշխատանքների

Պատվիրատու՝

<< Սարգսյան Սամվել Ծերունի >> ԱԶ

Կատարող՝ << Յուլի-Դալի >> ՍՊԸ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	3
Ձեռնարկողի մասին տեղեկություն	3
1.1 Հապավումներ.....	3
1.2 Նախատեսվող գործունեության նպատակը եվ հիմնավորումը	4
1.3 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)	7
1.3.1 Նախատեսվող գործունեության նկարագիր.....	7
Էներգախնայողության և էներգաարդյունավետության հետ կապված միջոցառումներ	9
1.3.2 Երկրաֆիզիկական ուսումնասիրություններ.....	10
1.3.3 Նախատեսվող աշխատանքների կազմակերպում.....	14
1.3.4 Առաջարկություններ օբյեկտի շինարարության կազմակերպման վերաբերյալ	14
1.3.5 Առաջարկություններ օբյեկտի շինարարության մատակարարման կազմակերպման վերաբերյալ	15
1.3.6 Կադրային ապահովում և շինտեխնիկա.....	17
1.3.7 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում	20
2. ՆԱԽՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ.....	23
2.1 ՖԻԶԻԿԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ	23
2.2 ԿԼԻՄԱՆ	26
2.3 Օդային ավազան	29
2.4 Ջրային ռեսուրսներ.....	32
2.5 Հողերի նկարագիրը	33
2.6 Հիմնային աշխատանքներ	33
2.7 Կենսաբազմազանություն.....	33
2.8 Թափոնների կառավարում.....	35
3 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	36
3.1 ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ	36
3.2 ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ	37
3.3 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ	37
3.3.1 ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴ.....	37
3.3.2 ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՄՆԵՐ.....	38
3.3.3 ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՄՆԵՐ	38
3.3.4 ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ.....	39
Կենդանական աշխարհի պահպանության միջոցառումներ	40
3.3.5 ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ	40
3.3.6 ԱՂՄՈՒԿԻ և ԹՐԹՈՒՄՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ.....	42
4. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ	46
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՅՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ.....	47
ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ/ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ.....	50
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	51
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	52

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ձեռնարկողի մասին տեղեկություն

1.1 Ձեռնարկող՝	<< Սարգսյան Սամվել Ծերունի >> ԱԶ
1.2 Ձեռնարկողի իրավաբանական հասցեն՝	ՀՀ Արարատի մարզ, համայնք Արտաշատ, գյուղ Մխչյան 11/1 հողամաս հասցե
1.3 Նախատեսվող գործունեության վարչական տարածքը՝	ՀՀ Արարատի մարզ, համայնք Արտաշատ, բնակավայր Մխչյան

1.1 Հապավումներ

ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն

ՓԲԸ՝ Փակ Բաժնետիրական Ընկերություն

ՍՊԸ՝ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

ՊՈԱԿ՝ պետական ոչ առևտրային կազմակերպություն

1.2 Նախատեսվող գործունեության նպատակը եվ հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Ջերմոցային տնտեսության նախագիծը նախատեսվում է իրականացնել ՀՀ Արարատի մարզ, համայնք Արտաշատ, գյուղ Մխչյան 11/1 հողամաս հասցեում: Գործունեության նպատակն է կառուցել ժամանակակից ջերմոցային տնտեսություն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի /ա/ ենթակետի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

Ջերմոցային տնտեսության աշխատաքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման այս զեկույցը նկարագրում է նախատեսվող գործողությունները, բնապահպանական ելակետային պայմանները, հնարավոր ազդեցությունները, բնապահպանական ազդեցության գնահատման շրջանակը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

Իրավական հիմքերը

Նախատեսվող գործունեության կազմակերպումն իրականացվելու է բնապահպանության բնագավառում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններով և ՀՀ օրենսդրության (օրենքների և ենթաօրենսդրական ակտերի) այն պահանջներով, որոնք առնչվում են շրջակա միջավայրի պահպանության և մասնավորապես նախատեսվող գործունեության կարգավորման հետ: Դրանցից հիմնականներն են՝

1. ՀՀ Հողային օրենսգիրք (02.5.2001թ.),
2. ՀՀ Ջրային օրենսգիրք (04.6.2002թ.),
3. <<Թափոնների մասին>> ՀՀ օրենք (24.11.2004 թ.),
4. <<Վարչական իրավախախտումների մասին>> ՀՀ օրենք (07.02.2012թ.),
5. <<Մթնոլորտային օդի պահպանության մասին>> ՀՀ օրենք (01.11.1994թ.),
6. <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենք (21.06.2014թ),
7. <<Բնապահպանական վերահսկողության մասին>> ՀՀ օրենք (11.04.2005թ),
8. << Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենք (30.05.2001թ),
9. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 6 մայիսի 2002թ. N 138 հրաման “Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում” N2– III – 11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին”
10. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 25 հունվարի 2010թ. N 01-Ն հրաման “Հողի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ N 2.1.7.003-10 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին”
11. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 17 մայիսի 2006 թվականի N 533-Ն հրաման “Աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) հիգիենիկ նորմերը ՀՆN 2.2.4-009-06 հաստատելու մասին”
12. ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» N 121-Ն որոշում,

13. ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թվականի դեկտեմբերի 25-ի «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկը հաստատելու մասին» N 430-Ն հրաման:

14. «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-211, 27.11.2006.),

15. «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-52, 03.04.2000թ.),

16. «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-22, 23.11.1999թ.),

17. ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N71-Ն որոշում,

18. ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշում,

19. ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշում,

20. ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» N1059-Ա որոշում,

21. «Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 14.08.2014թ.-ի N781-Ն որոշումը:

22. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 6 մարտի 2002թ. N 138 հրաման “Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում” N2 – III – 11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին:

23. ՀՀ քաղաքաշինության նախարարի հրամանը ՀՀԾՆ 22-04-2014

<<Պաշտպանություն աղմուկից>> Շինարարական նորմերն հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին:

1.3 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)

1.3.1 Նախատեսվող գործունեության նկարագիր
Ներկայացված նախագիծը կատարված է համաձայն Արտաշատ համայնքի ղեկավարի կողմից **09.01.2026թ.** տրված **NԼԹ-0209-26** նախագծման թույլտվության: ՀՀ Արարատի մարզ, համայնք Արտաշատ, գյուղ Մխչյան 11/1 **հողամաս** հասցեում գտնվող, **03-059-0338-0011** կադաստրային ծածկագիրը կրող, **Սամվել Ծերունի Սարգսյանին** սեփականության իրավունքով պատկանող (սեփ. վկայական № **10122025-03-0084**)՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության **1.4504** հա մակերեսով հողամասում նախատեսվում է կառուցել **ջերմոցային տնտեսություն:**

Ջերմատանը նախատեսվում է աճեցնել ծաղիկներ:

Ծաղիկների մշակության ընթացքում թունաքիմիկատների (պեստիցիդների) կիրառումը բացառելու նպատակով ներդրվելու է **Կենսաբանական պաշտպանության տեխնոլոգիա (IPM - Integrated Pest Management):** Վնասատուների դեմ պայքարն իրականացվելու է **էնտոմոֆագերի** (օգտակար միջատների) միջոցով, ինչը բացառում է քիմիական նյութերի ներթափանցումը հողի և ջրային ռեսուրսների մեջ:

Կենսաբանական մեթոդների կիրառման շնորհիվ զրոյացվում է մթնոլորտային օդի և հողի թունավոր նյութերով աղտոտման ռիսկը, ինչպես նաև վերանում է քիմիական նյութերի տարաների (թափոնների) առաջացման խնդիրը:

Այն իրականացվելու է պայմանագրային հիմունքներով՝ կնքվելիք ծառայությունների մատուցման պայմանագրի համաձայն, որի արդյունքում որևէ լրացուցիչ թափոն չի առաջանա տարածքում:

Նախատեսվող ջերմոցը ապակեպատ է, հատուկ ջերմամեկուսիչ (երկշերտ), ինչը բացառում է պոլիէթիլենային թաղանթների՝ որպես պարբերական թափոնի առաջացումը: Ապակե կառուցվածքը հանդիսանում է երկարամյա լուծում, ինչը զգալիորեն նվազեցնում է շրջակա միջավայրի վրա պլաստիկ թափոնների ճնշումը:

«Ջերմոցային տնտեսության կառուցման» աշխատանքային նախագիծի համար ելակետային տվյալներ են հանդիսանում՝

- Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ. 10122025-03-0084 վկայականը, ծածկագիրը՝ 03-059-0338-0011, սեփականության իրավունքով պատկանում է Սամվել Սարգսյան Ծերունուն,

- Կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված 1.500 և 1:2000 կադաստրային քարտեզը,

- ՀՀ Արարատի մարզի Արտաշատի համայնքապետարանի կողմից 09.01.2026թ ին տրամադրված ՆԹ -0209-26 նախագծման թույլտվությունը:

Նախագծվող ջերմոցային տնտեսությունը գտնվում է ՀՀ Արարատի մարզ, համայնք Արտաշատ, գյուղ Մխչյան 11/1 հողամաս հասցեում: Տեղակայված է 1.4504հա հողարածքի վրա:

Հողամասում նախատեսվում է նախագծել և կառուցել հետևյալ շինությունները՝

- Ջերմոց 128.0x44.00մ առանցքային չափերով

- Ջերմոց 112.0x48.00x104.00x36.00x12.00x8.00մ առանցքային չափերով

- Տեխնիկական և սպասարկման սրահ 63.94x12.00մ չափերով:

Ջերմոցների ընդհանուր մակերեսը կազմում է՝ 10912քմ:

Որպես 0.00 պայմանական նիշ ընդունված է ջերմոցի հատակի մակերևույթը՝ այդ պատճառով թեքահարթակ չի նախատեսվում: Ներկառուցված տեսակավորման, տեխնիկական և սպասարկման սրահը նախատեսվում է իրականացնել մետաղական հիմնակմախքով: Պատերը և տանիքը իրականացվելու են սենդվիչ պանելներով, որոնք ձգվում են մետաղական հիմնակմախքին:

Ներկառուցված տեսակավորման, տեխնիկական և սպասարկման սրահը 768քմ է:

Ներկառուցված տեսակավորման, տեխնիկական և սպասարկման սրահում են գտնվելու նախասրահը, կաթսայատունը, սառնարանը, օժանդակ տարածքը, տնօրենի սենյակը, աշխատասենյակները, հանդերձարանները, սանհանգույցները և խոհանոցը:

Ջերմոցային տնտեսության շինությունների հիմնակմախքը իրականացվելու են հավաքովի մետաղական էլեմենտներով:

Իրականացվելու են կետային հիմքեր, ամրանավորված A500C դասի ամրաններով:

Իրականացվելու են ժապավենային հիմքեր, ուղղանկյունաձև կտրվածքի, միմյանց փոխխաչվող ժապավեններից:

Կոնստրուկցիաների երկայնական ամրանները A500C դասին, լայնականները՝ A240:

Հենասյուները իրականացված են մետաղական պրոֆիլավոր խողովակներով 120*120*3.0մմ,

100*50*2.0 մմ, 50*50*2.0 մմ հատվածքի չափերով:

Ներկառուցված տեսակավորման, տեխնիկական և սպասարկման սրահը իրականացվելու է հավաքովի մետաղական էլեմենտներով: Արտաքին պատերը իրականացվելու են սենդվիչ պանելներով:

Ջերմոցային տնտեսության կառուցման համար բոլոր դետալներ բացի ապակիներից ներկրվելու են Չինաստանից:

Ջերմոցների և տնեսակավորման, տեխնիկական և սպասարկման սրահի պատրաստի դետալների տեղափոխումից հետո աշխատելու է շինարարական տեխնիկա և բանվորական ուժ:

3 ամիս աշխատելու է ՋԻԼ մակնիշի 2 մեքենա, 10 օր JCB և 7 օր գրեդել:

Նախքան նախագծային աշխատանքները սկսելը ուսումնասիրվել է տարածքը և ֆիքսվել է ամբողջ բուսականությունն ու ծառերն ու թփերը:

Ջերմոցային տնտեսության մուտքն ու ելքը նախատեսվում է իրականացնել հողամասի հետևի մասից է հողամասեր տանող ճանապարհից:

Շինարարության ընթացքում տարածքում աշխատողների քանակը օրական 10 հոգի է:

Նախատեսվում է գրունտի փորում 67.67իսմ, որը ամբողջությամբ ետլիցք է արվելու ջերմոցների մեջ :


Շինությունների արտաքին կոմունիկացիաները անցկացնել համաձայն տրված տեխնիկական պայմանների:

Նախագիծը կատարված է հետևյալ բնակլիմայական պայմանների համար՝

- Տեղանքի սեյսմակայունությունը՝ III գոտի:
- Ձմռան նորմատիվային ջերմաստիճանը 18°C –ից 21 °C:
- Քամու նորմատիվային ուժը՝ 35կգու/քմ:

Պահպանելով քաղաքաշինական բոլոր նորմատիվ հեռավորությունները:

Ստորև ներկայացվում է տարածքի առկա իրավիճակն արտացոլող քարտեզ՝ հարևան կից շենք շինությունների տեղադրությամբ՝



Նախագծով առաջարկվում է՝

Նախագծվող ջերմոցային տնտեսությունը գտնվում է ՀՀ Արարատի մարզ, համայնք Արտաշատ, գյուղ Մխչյան 11/1 հողամաս հասցեում: Տեղակայված է 1.4504հա հողարածքի վրա:

Հողամասում նախատեսվում է նախագծել և կառուցել հետևյալ շինությունները՝

- Ջերմոց 128.0x44.00մ առանցքային չափերով
- Ջերմոց 112.0x48.00x104.00x36.00x12.00x8.00մ առանցքային չափերով
- Տեխնիկական և սպասարկման սրահ 63.94x12.00մ չափերով:

Ջերմոցների ընդհանուր մակերեսը կազմում է՝ 10912քմ:

Կառուցապատվող շինության նախագծային հզորության տեխնիկատնտեսական տվյալները ներկայացված են ստորև:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Հողամասի ընդհանուր մակերեսը՝ 1.4504հա

Կառուցապատման մակերես՝ 80.52%


Կանաչապատման մակերեսը՝ 19,48% /ըստ ՃՀԱ-ի կանաչապատում նախատեսված չէ/:

- հողամասերի նպատակային նշանակությունը կամ հողատեսքը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության,
- գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումն իրականացվելու է ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքապետարանի հետ համաձայնեցված կանաչապատման նախագծի համաձայն:

Նախատեսվող գործունեությունն իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն: Այն ներդաշնակ է շրջակա կառույցներին տվյալ միջավայրում:

- Ինժեներաերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ իրականացնելու համար:



Գազամատակարարում գազամատակարարումը կատարվելու է համաձայն՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից տրված գազաֆիկացման և գազամատակարարման տեխնիկական պայմանի՝ շինությունվորության ստացումից հետո:

Էլեկտրամատակարարում. արտաքին էլեկտրամատակարարումը կիրականացվի ՀՀ օրենսդրությամբ՝ ստացվելիք տեխն. պայմանի:

Կոմիտարկվի նաև Էներգաարդյունավետ ջեռուցման համակարգեր՝ արևային ՖՎ կայաններ որպես այլընտրանք:

Ջրամատակարարում, ջրահեռացում- ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը կիրականացվի ՀՀ օրենսդրությամբ՝ ստացվելիք տեխնիկական պայմանի /կցվում է/:

Աղբահեռացում. Շահագործման փուլում աղբահեռացումը կատարվում է Արտաշատի համայնքապետարանի վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման կարգը հաստատելու մասին» որոշմամբ սահմանված կարգով: Տեղադրվելու են 6 հատ 1*1,5 չափերի աղբի տեսակավորման աղբամաններ:

Աղբը նախատեսվում է տեղափոխել Արտաշատ համայնքապետարանի կողմից հատկացված վայր տեղափոխել՝ համաձայն կնքվելիք պայմանագրի:

Բարեկարգում և կանաչապատում. Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել:

Կանաչապատում. Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է կառուցապատումից ազատ տարածքի բարեկարգում և կանաչապատում՝ 19,48%: Կանաչապատումը կատարվելու է համայնքապետարանի կողմից համաձայնեցված կանաչապատման նախագծին համապատասխան: Կանաչապատումն իրականացվելու է տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ:

Շինարարական մոնտաժային աշխատանքների իրականացման ժամանակացույց


Շինարարության նորմատիվ տնտղությունը որոշվել է համաձայն (N 596-Ն 19.03.2015թ. ՀՀ Կառավարության որոշում կետ 111, 113) ՄՆԻՊ 1.04.03-85* մաս II, հետև հիման վրա հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրը, ընդհանուր մակերեսը: Օբյեկտի ընդհանուր կոմպլեքսի շինարարության նորմատիվ տնտղությունը ծրագրվում է 24 ամիս շինարարական աշխատանքների կատարման համար թույլատրման տրամադրման օրվանից:

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

N	ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՕՐԱՏՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՑԻԿ																							
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24
1	ՀՈՐԱՑՈՒՄ, ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ																								
2	ՀԻՄՔԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ																								
3	ԵՐ ԿՈՆՍՏՐՈՒԿՏԻՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ																								
4	ԱՊԱԿԻՆԵՐԻ ՄՈՒՏԱԾՈՒՄ																								
5	ՍԵՆՆԱԿԱՆ ՊԵՆԵՆՆԵՐԻ ՄՈՒՏԱԾՈՒՄ																								
6	ՏԱՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ, ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ																								
7	ՀԱՐԿԱՐՄԱՆ, ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ																								
8	ԻՆՏԵՆՆԱԿԱՆ ՑԱՆՔԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ																								
9	ՏԱՐԱԾՈՒ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ, ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ																								
10	ՇԻՆԱՐԱՐԻ ՀԱՎԱԾՈՒՄ, ՏԱՐԱԾՈՒ ՄԱՐԿՈՒՄ																								

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ՝ 2 ՏԱՐԻ

Պաշտոն	Ա. Ա.	Մտորագրություն	Կառուցապատող՝	Ստանդարտացված	Փուլ	Թիվ	Թիվ
Տնօրեն	Լ. Մանթրյան		ՀՀ Արարատի մարզ, համայնք Արարատ, ցրդի Միջոցի 11/1 հողամաս, զբոսայգիի տնտեսության կառուցման նախագիծ	Ա.Ա.	4	4	
Հարտարապետ	Գ. Կոնյալյան		ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ, ԿԱՐԱՐԱՏԻ ՀԱՄԱՅՆՔ, ԿԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ, ԿԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ, ԿԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ	Ա.Ա.	4	4	
Հարտարապետ	Գ. Բաղդասարյան		ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ, ԿԱՐԱՐԱՏԻ ՀԱՄԱՅՆՔ, ԿԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ, ԿԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ, ԿԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ	Ա.Ա.	4	4	



Համաձայն շինաշխատանքների հատակագծի շինարարական մեքենաները կայանվելու են հողատարածքի հյուսիսային կողմում: Մեքենաների անվադողերի լվացման վայրը նախատեսված է շինհրապարակի մուտքային և ելքային կետերում:

Նախատեսվում է շինաշխատանքներից առաջացած բետոնաջրերը և կեղտաջրերը **հավաքել** ժամանակավոր հորում տեղադրված կեղտաջրերի հեռացման տարայում ($\leq 5 \text{ մ}^3$): Տարայում հետերոգեն մասնիկների նստեցումից հետո պարզված ջուրը օգտագործել շին աշխատանքներում, իսկ հետերոգեն զանգվածը պարբերաբար հեռացնել տարածքից լիցենզավորված կազմակերպության միջոցով:

1.3.2 Նախատեսվող աշխատանքների կազմակերպում

Ելնելով առկա պայմաններից շինությունները բացի շինարարական նորմերով տրված անվտանգության հրահանգներից, անհրաժեշտ է կազմակերպել և աշխատանքների կատարման նախագծում արտացոլել անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ հատկապես կապված կռունկի գործողության գոտում կատարվելիք շինմոնտաժային աշխատանքների վերաբերյալ:

Բոլոր տիպի շինմոնտաժային աշխատանքները պետք է կատարել պահպանելով շինարարական նորմաները, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվում են տեխնիկական

հսկողություն իրականացնող մարմնի կողմից:

Շինհրապարակը կազմակերպելիս պետք է ղեկավարվել քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից տրված հրահանգներով:

Շինհրապարակը կոմպլեկտավորվում է հակահրդեհային ինվենտարով:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ է կատարել միջոցառումներ գերծ պահելու շրջակա միջավայրը աղտոտումից, թունավոր արտաթորումներից:

Հետիոտների անվտանգությունը ապահովելու նպատակով շինհրապարակը անհրաժեշտ է ցանկապատել թիթեղով:

Հողային աշխատանքների իրականացման ընթացքում պայթեցման աշխատանքներ չեն նախատեսվում:

Հողային աշխատանքները նախատեսվում է իրականացնել մեքենայացված եղանակով՝ Hyundai 170W տիպի էքսկավատորով, դժվար հասանելի մասերում՝ ձեռքով:

Հանված գրունտը կարճաժամկետ կպահվի շինհրապարակում հետո կօգտագործվի ետլիցքի նպատակով, մյուս զգալի մասը՝ անմիջապես բարձում են ավտոինքնաթիռները և տեղափոխվում համայնքապետարանի կողմից հատկացված վայր:

Ետլիցքը անհրաժեշտ է իրականացնել շերտային տոփանմամբ ծանր տոփանիչներով, հիմնային շերտը առաջարկվում է ամրացնել գլղոնով խորանարդային գրտնակով կամ տոփանիչներով, իսկ շինարարական կոնստրուկցիաների անմիջական մերձակայքում՝ ձեռքի տոփանիչներով:

1.3.3 Առաջարկություններ օբյեկտի շինարարության կազմակերպման վերաբերյալ

Շինմոնտաժային աշխատանքների իրականացման տեխնոլոգիայի տեսանկյունից շինարարությունը կարելի է իրականացնել ավանդական եղանակներով՝ կիրառելով շինարարական կազմակերպության սեփական շինարարական մեքենաները և մեխանիզմները, իսկ բացակայության դեպքում, վարձակալել դրանք այլ կազմակերպություններից:

Ժամանակավոր շինությունների, վերամբարձ կռունկի, պահեստավորման մակերեսների տեղակայումը պատկերված է շինարարական գլխավոր հատակագծի վրա:

Առաջարկվում է հնարավորինս օգտագործել գույքային շարժական շինություններ:

Ժամանակավոր շինությունների ցանկը և դրանց տեղակայումը ցանկալի է լրացուցիչ ճշտվեն տեղում և համաձայնեցվեն պատվիրատուի հետ:

1.3.4 Առաջարկություններ օբյեկտի շինարարության մատակարարման կազմակերպման վերաբերյալ

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է շինարարական ինդուստրիայի ձեռնարկություններից և գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից: Շաղախը և բետոնը կառաքվեն Արտաշատ համայնքի մոտակա բետոնաշաղախային հանգույցներից մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Առաքումը ծրագրվում է այնպիսի պարբերականությամբ, որ ապահովվի աշխատանքների անընդհատությունը:

Առաջարկվում է շինարարության նյութատեխնիկական մատակարարման հետևյալ սխեման.

- Առանձին ամրանային ձողերը և հիմնակմախքները, մետաղական կոնստրուկցիաները, մոնտաժային իրերն ավտոմոբիլային փոխադրամիջոցներով բերվում են անմիջականորեն շինարարական հրապարակ, որտեղ կատարվում է դրանց պահեստավորում և տեղադրում,
- Բետոնային խառնուրդը միաձույլ բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաների համար, ինչպես նաև շաղախը շարվածքի համար առաքվում են անմիջապես շինհրապարակ ավտոբետոնախառնիչներով և շաղախատարներով,
- Հարդարման նյութերը կարող են առաքվել ինչպես անմիջապես շինհրապարակ, այնպես էլ շինարարական կազմակերպության բազա՝ հետագա առաքման նպատակով:

Շինարարությունը կիրականացվի մասնագիտացված կազմակերպության կողմից :
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԳԻՏԱԳՎԱԾ

Աշխատանքների բնույթից ելնելով բանվորական բրիգադները ձևավորվում են որպես բազմապրոֆիլ կամ մասնագիտացված:

Բազմապրոֆիլ բրիգադները նպատակահարմար է կազմավորել խոշորացված (ընդհանրացված) տիպի ավարտուն շինարարական արտադրանքի, աշխատանքների ընդհանրացված փուլի՝ կոնստրուկտիվ հանգույցի ստեղծման նպատակով:

Բրիգադների քանակական և մասնագիտական - որակական կազմը սահմանվում է աշխատանքների ծրագրված ծավալների՝ աշխատատարության և աշխատանքների կատարման ժամկետների հիման վրա:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Բանվորների աշխատանքի պաշտպանությունը ապահովվելու է անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ (հատուկ արտահագուստ՝ կոշիկ)՝ համալիր պաշտպանության միջոցառումների կատարումով (ցանկապատում՝ լուսավորում՝ օդափոխում՝ պաշտպանիչ և արգելակիչ սարքեր և հարմարանքներ և այլն)՝ սանիտարակենցաղային շինություններով և սարքավորումներով՝ գործող նորմերին և կատարվող աշխատանքների բնույթին համապատասխան

Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

Աշխատանքի պաշտպանության՝ անվտանգության տեխնիկայի՝ արտադրական սանիտարահիգիենիկ միջոցառումների և հակահրդեհային անվտանգության վերաբերյալ անց է կացվելու հրահանգում: Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

Բանվորների անվտանգության տեխնիկայի ուսուցման՝ հրահանգման ժամանակին և որակով անցկացման՝ անհատական պաշտպանական միջոցների վիճակի և կիրառման՝ արտադրական անվտանգության և արտադրական սանիտարահիգիենիկ անվտանգության հետ կապված բոլոր միջոցառումների կատարման հսկողությունը վերապահվում է աշխատանքներն իրականացնող կազմակերպությանը:

1.3.5 Կադրային ապահովում և շինտեխնիկա

Շինարարությունում աշխատողների ընդհանուր թիվը՝ 10 մարդ, որից

Ինժիներատեխնիկական անձնակազմ - 3 մարդ

Հիմնական շինարարական տեխնիկայի պահանջարկը որոշվում է աշխատանքների ծավալների, մեխանիզմների և մեքենաների միջին արտադրողականության և աշխատանքների կատարման ընտրված եղանակների հիման վրա: Հիմնական մեքենաների և մեխանիզմների անվանացանկը բերված է ստորև:

Շինարարական մեքենաների և մեխանիզմների անվանացանկ

ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԵՎ ՀԱՐՄԱՐԱՆՔՆԵՐԻ ԱՍՓՈՓԱԳԻՐ

N	Անվանում	Մակնիշ	Քանակ	Ծանոթություն
1	Ավտոկռունկ	KC-35715-10	1	կամ համարժեք
2	Բետոնամղիչ ավտոմոբիլ	СБ-126	1	ըստ պահանջի
5	Ինքնաթափ ավտոմոբիլ	MA3 5550	2	կամ համարժեք
6	Էքսկավատոր Hyundai	170W	1	կամ համարժեք
7	Էլ. եռակցման սարք	СТН 500	1	կամ համարժեք
8	Շարժական կոմպրեսոր	ЗИФ - 55 В	1	ըստ պահանջի

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը կիրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ մասնագիտացված սպասարկման կետերում:

1.3.6 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում

Շինարարական նյութերից օգտագործվելու է բետոն, մետաղական ամրաններ եւ այլ կոնստրուկցիաներ, ապակի, փայտ եւ այլն: Բնառեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, խոնավացման, ինչպես նաեւ շինարարական անձնակազմի խմելու եւ կենցաղային նպատակների համար:

- a) Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$W_{\text{է.տ.}} = (n \times N + n_1 \times N_1) \times T, \text{ որտեղ}$$

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 3 մարդ

N – ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³օր/մարդ

n_1 – սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 7 մարդ

N_1 – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 խմ.օր/մարդ

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 520օր

$$W_{\text{խ.տ.}} = (3 \times 0.016 + 7 \times 0.025) \times 520 = 115,96 \text{ խմ/շին. ժամ.}:$$

- b) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

$$U_1 = S_1 \times K_1 \times T \times D, \text{ որտեղ՝}$$

S_1 – ջրվող տարածքի մակերեսը, 2000 քմ,

K_1 – 1 քմ օրական ջրցանի նորմը, 0.0015 խմ,

T – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 520

D – Ջրցանման քանակը օրվա ընթացքում – 2

$$U_1 = 2000 \times 0.0015 \times 520 \times 2 = 3120 \text{ խմ/շին. ժամ.}:$$

Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 3482,79 խմ/շին. ժամ:

Ջերմատան ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի միանալով, որի համար սահմանված կարգով ստացվել է տեխնիկական պայման /կից ներկայացվում է հավելվածներ բաժնում/ և լիցենզավորված կազմակերպության կողմից կիրականացվի նախագիծ:

Շինարարության փուլում ջրցանման համար ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով՝ ավտոցիստեռներով, պայմանագիր կկնքվի համապատասխան մատակարար կազմակերպության հետ (նշված գործընթացը հնարավոր կլինի կազմակերպել շինարարության թույլտվության ստացումից հետո):

Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովեն տեղադրելով բնագույքաբաններ, խմելու ջուրը կմատակարարվի տարաներով:

Շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում էլեկտրամատակարարումը կիրականացվի համաձայն տեխնիկական պայմանի, որի համար լիցենզավորված կազմակերպության կողմից կիրականացվի նախագիծ:

Շինարարական փուլի ազդեցությունը և մեղմող միջոցառումները

Օդային ավազան.

Ջերմոցային տնտեսության շինարարության ընթացքում կառաջանան մի շարք նյութերի արտանետումներ: Հիմնական արտանետումը՝ փոշին, կառաջանա հողի փորման, բեռնման և տեղափոխման ընթացքում: Շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ կառաջանան նաև դիզվառելիքի այրման արգասիքներ՝ ազոտի, ծծմբի և ածխածնի օքսիդներ, պինդ մասնիկներ:

ա) Փորման-բեռնման աշխատանքների ժամանակ փոշու արտանետումները

Փորման-բեռնման աշխատանքների ժամանակ փոշու արտանետումների հաշվարկը կատարվել է ըստ “ВРЕМЕННОЕ МЕТОДИЧЕСКОЕ ПОСОБИЕ ПО РАСЧЕТУ ВЫБРОСОВ ОТ НЕОРГАНИЗОВАННЫХ ИСТОЧНИКОВ В ПРОМЫШЛЕННОСТИ СТРОИТЕЛЬНЫХ МАТЕРИАЛОВ”, Минпромстрой СССР, 1987:

$Q_1 = (P_1 \times P_2 \times P_3 \times P_4 \times P_5 \times G \times 10^6 \times B \times P_6) / 3600$ տ/ժամ (բանաձև 1), որտեղ

P_1 - փոշու ֆրակցիայի բաժնեմասն է գրունտերում, 0.05

P_2 - 0-50 մկմ չափերով մասնիկների բաժնեմասն է տարածվող փոշու աերոզոլում, 0.02

P_3 - գործակից, որը հաշվի է առնում շինարարական տեխնիկայի աշխատանքի գոտում քամու միջին արագությունը, 1.0

P_4 - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոնավությունը, 0.4 (հաշվի առնելով նաև ջրցանը)

P_5 - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոշորությունը, 0.4

P_6 - գործակից, որը հաշվի է առնում տեղանքի պայմանները, 1.0

B - գործակից, որը հաշվի է առնում նյութի բեռնաթափման բարձրությունը, 0.5

G - հանվող գրունտի և հողի քանակը՝ 67,67մ³ ամբողջ շինարարության ընթացքում, կամ 108,272 տ:

Շինարարական աշխատանքները իրականացվելու են 24 ամիս, որից հողային աշխատանքները՝ 2 ամիս, կամ 60 օր:

$$G = 108,272 \text{ տ} : 60 \text{ օր} : 8 \text{ ժամ/օր} = 0,22 \text{ տ/ժամ:}$$

$$Q_1 = (0.05 \times 0.02 \times 1.0 \times 0.4 \times 0.4 \times 0,22 \times 10^6 \times 0.5 \times 1.0) / 3 \ 600 = 0.012 \text{ գ /վրկ:}$$

Արտանետումների քանակը շինարարական աշխատանքների արդյունքում կկազմի՝

$$0.012 \text{ գ/վրկ} \times 60 \text{ օր} \times 8 \text{ ժամ} \times 3 \ 600 \text{ վրկ/ժամ} : 1 \ 000 \ 000 \text{ գ/տ} = 0,021 \text{ տ:}$$

Վնասակար նյութերի արտանետումներ են սպասվում նաև շինարարական և տրանսպորտային միջոցների շահագործման ժամանակ, վառելիքի այրման ընթացքում:

Վառելանյութի օգտագործումը

Վառելանյութը կարող է օգտագործվել մեքենաների և բեռնատարների շահագործման, ըստ շինարարական գործունեության պահանջի: Հիմնականում օգտագործվելու է դիզելային վառելիք:

Մեքենաների և բեռնատարների վառելիքի ծախսը կարող է տարբերվել, կախված մեքենայի տեսակից, տատանվելով 80-90լ/օր սահմաններում, ամբողջ շինարարության ընթացքում վառելիքի հաշվարկային ծախսը կկազմի 5400 լ կամ 4,59 տ:

Վառելանյութի պահպանման համար պետք է հատկացվի հատուկ տարածք: Տարածքը պետք է ունենա բետոնե հարթակ և արտահոսքերի հավաքման համակարգ:

բ) Դիզելային վառելիքի այրման արգասիքները

Դիզ.վառելիքի հետ կապված արտանետումները հաշվարկվում են «Ավտոտրանսպորտից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակների որոշման» մեթոդական հրահանգի հիման վրա:

Ըստ նշված մեթոդակարգի ծանր ավտոտրանսպորտի և տեխնիկայի տեսակարար արտանետումները բերված են ստորև աղյուսակ 17-ում:

Աղյուսակ 17: Տեսակարար արտանետումներ (գ/կգ վառելիք)

Վառելիքի տեսակը	Նյութի անվանումը						
	NO _x	CH	ՑՕՄ	CO	N ₂ O	CO ₂	ՊՄ
Դիզելային վառելիք	42.3	0.243	8.16	36.4	0.122	3138	4.3

Հաշվի առնելով, որ տարածքում աշխատելու են նոր գնված տեխնիկական միջոցներ, պարկի տարիքի հետ կապված գործակիցները չեն կիրառվում:

Վառելիքի այրման ընթացքում առաջացող վնասակար նյութերի արտանետումները բերված են աղյուսակ 18-ում, որում միավորվել են ածխաջրածինները, ազոտի օքսիդները:

Աղյուսակ 18: Ավտոտրանսպորտից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակը

Ավտոմեքենայի կատեգորիան	Վնասակար նյութը	Տեսակարար արտանետումները, գ/կգ	Արտանետումները, տ/շին.ժամ
Մեծ բեռնունակության ավտոտրանսպորտ	CO	18,2	1,265
	Ածխաջրածիններ	4,201	0,29
	NO _x	21.211	1,45
	Մուր	2,15	0.15

Ծծմբային անհիդրիդ

Ծծմբային անհիդրիդի (SO₂) արտանետումները հաշվարկվում են ելնելով այն մոտեցումից, որ վառելիքում պարունակվող ամբողջ ծծումբը լիովին վերածվում է SO₂-ի: Այդ դեպքում կիրառվում է CORINAIR գույքագրման համակարգի բանաձևը.

$ESO_2 = 2 \Sigma k_s b$, որտեղ՝

k_s -ը վառելիքում ծծմբի միջին պարունակությունն է՝ 0.002 տ/տ

b –ն վառելիքի ծախսն է՝ 4,59 տ/շին.ժամանակ:

$SO_2 = 2 \times 4,59 \times 0.002 = 0.018$ տ:

Ընդամենը շինարարական փուլում առաջացող արտանետումների քանակները բերված են աղյուսակ 19-ում:

Աղյուսակ 19: Շինարարության փուլի արտանետումները

N	Արտանետվող նյութի անվանումը	Արտանետումը, տ/շին.ժամ
1	Անօրգանական փոշի	1,43
2	Ածխածնի օքսիդ	1,265
3	Ածխաջրածաններ	0,29
4	Ազոտի երկօքսիդ	1,45
5	Մուր	0.15
6	Ծծմբային անհիդրիդ	0,018

Հաշվի առնելով նախատեսվող գործունեության բնույթը, օդի աղտոտման մակարդակը գնահատվում է որպես ցածր: Ազդեցությունը ավելի նվազեցնելու նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի և հանվող գրունտի ջրցան, շինարարական տեխնիկան և ավտոմեքենաները պարբերաբար կատուզվեն և շարժիչները կկարգաբերվեն:

Շահագործման փուլ

Արտանետման աղբյուր է հանդիսանում շահագործման փուլում գազով աշխատող կաթսան:

Արտանետումների հաշվարկ

Կաթսայատնում բնական գազի այրման ժամանակ մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի հաշվարկը կատարվել է համաձայն «Մինչև 5.8 ՄՎտ դրվածքային

հզորությամբ պինդ, հեղուկ և գազային վառելիքով աշխատող կաթսայատների վնասակար նյութերի արտանետումների հաշվարկի» մեթոդական ցուցումների:

Այս այդ մեթոդակարգի բնական գազի այրման ժամանակ արտանետումների տեսակարար գործակիցները բերված են ստորև.

Վնասակար նյութը	Չափման միավորը	Արտանետման տեսակարար գործակիցը
Ազոտի երկօքսիդ	գ/կվտ.ժ	0.252
Ածխածնի օքսիդ	գ/կվտ.ժ	0.108

Գազի առավելագույն ծախսը կազմում է՝ 60 000 մ³/տարի:

«Գազայրում-Արմենիա» ՓԲԸ տվյալներով ՀՀ ներկրվող բնական գազի միջին ջերմատվությունը կազմում է՝ 9.3 կՎտ.ժ/ մ³:

$$150\,000\text{մ}^3 \times 9.3\text{ կՎտ.ժ/մ}^3 = 1395000\text{ կՎտ.ժ}$$

Ստորև արտանետումների հաշվարկների արդյունքները կաթսայատան համար.

Վնասակար նյութը	Ջերմության ցուցանիշը, կՎտ.ժ	Արտանետումները,	
		գրամ/տարի	տ/տարի
Ազոտի երկօքսիդ	1395000	351540	0.35
Ածխածնի օքսիդ	1395000	150660	0.15

Վերը նշված աղյուսակից երևում է բոլոր արտանետումները չեն գերազանցի սահմանային նորմերը և կգտնվեն թույլատրելի նորմերում:

1.1.1. Ջրային ավազան

Շինարարության ընթացքում առաջացած կենցաղային և արտադրական հոսքաջերի հեռացման համար կտեղադրվեն շարժական բիոգուգարաններ՝ լվացարանով: Բիոգուգարանների մաքրումը կկատարվի մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Շինարարական աշխատանքների ժամանակ ջուրն օգտագործվելու է միայն աշխատողների խմելու նպատակների համար: Աշխատողների կացությունը կազմակերպվելու է հարակից բնակավայրերում, յուրաքանչյուր օր անձնակազմը վերադառնալու է կացության վայր, որտեղ էլ կապահովվի բոլոր անհրաժեշտ սանիտարա-հիգիենիկ պայմանները:

1.1.2. Թափոնների կառավարում

Նախատեսվող շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում, տարածքում առաջացող երկու տեսակի թափոնները կարող են բացասաբար անդրադառնալ շրջակա միջավայրի վրա:

Շինարարական աշխատանքների ընթացքում, առաջացող թափոնատեսակներն են՝ Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի)/ ծածակագիրը՝ 91200400

01 00 4/, որը կհավաքվի աղբամաններում և պարբերաբար կտեղափոդվի համայնքային կոշտ կենցաղային թափոնների աղբավայր՝ համաձայն կնքվելիք պայմանագրի:

Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող /ծածակագիրը՝ 31401100 08 99 5/ ըստ առաջացման կտեղափոխվի համայնքի կողմից հատկացված վայր՝ համաձայն կնքվելիք պայմանագրի:

Շինարարական տեխնիկայի և ավտոտրանսպորտի բոլոր սպասարկման աշխատանքները, քայուղերով և վառելիքով լիցքավորումը կիրականացվի մասնագիտացված կայաններում, ինչը թույլ կտա բացառել վտանգավոր թափոնների առաջացումը:

Որևէ շինարարական աղբ չի առաջանալու, ողջ շինանյութերը պատրաստի չափսերով բերվելու է տարածք և հավաքվելու է տեղում:

Քանի որ, շինարարական տեխնիկան և ավտոտրանսպորտը կսպասարկվեն ավտոսպասարկման կայաններում, այլ թափոնատեսակներ տարածքում չեն առաջանա: Այնուամենայնիվ, ֆորս-մաժորային իրավիճակներում հնարավոր արտահոսքերից խուսափելու համար բոլոր տեսակի յուղերը և քայուղերը (կոմպրեսորային յուղ, արդյունաբերական յուղ և այլն) հավաքվելու և պահպանվելու են գործունեության տարածքում առանձնացված փակ սենյակում և տրամադրվելու են լիցենզավորված կազմակերպության՝ հետագա միջոցառումների իրականացման համար: Տեղափոխությունը ևս կիրականացվի լիցենզավորված կազմակերպության կողմից:

Ձեռնարկությունը որդեգրել է բույսերի պաշտպանության կենսաբանական մեթոդներ (օրինակ՝ օգտակար միջատների կամ բնական էքստրակտների կիրառում), ինչը նվազեցնում է հողի և ստորերկրյա ջրերի քիմիական աղտոտման ռիսկը:

2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅՂ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԽԵՄԱՆ

2.1 ՖԻԶԻԿԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Կառուցապատման ենթակա տարածքը գտնվում է ՀՀ Արարատի Մարզի Արտաշատ համայնքի Մխչյան բնակավայրի վարչական տարածքում հասցեում ՀՀ Արարատի մարզ, համայնք Արտաշատ, գյուղ Մխչյան 11/1 հողամաս հասցեում, այն նախկինում կառուցապատված չէ:

Նախատեսվող գործունեության տարածաշրջանի ֆիզիկա-աշխարհագրական նկարագիրը և ռելիեֆը

Նախատեսվող գործունեության վայրը՝ Մխչյան համայնքը, գտնվում է Արարատի մարզի Արտաշատ համայնքի տարածաշրջանում, որն ամբողջությամբ գտնվում է Արարատյան դաշտավայրի արևելյան մասում՝ Տարածաշրջանը կառուցվածքային տեսակետից գրաբենասինկլինալային իջվածք է, որը հյուսիսից, արևելքից և հարավ-արևելքից եզրավորվում է Արագածի և Գեղամա լեռնազանգվածներով, Ուրծի շղթայով, իսկ հարավից և արևմուտքից՝ Հայկական պարով, Մեծ և Փոքր Մասիսներով: Հին ծալքավորումների մնացորդները տեղ-տեղ լճաայուվիալ և պրոյուվիալ նստվածքների տակից երկրի մակերես են դուրս գալիս մի քանի տասնյակ մետրի հասնող բլուրների տեսքով: Տարածաշրջանը ունի հզոր, տեղ-տեղ մինչև 400 մ, լճագետային, այուվիալ-պրոյուվիալ նստվածքներով, լավային շերտեր: Այն ձգվում է Ախուրյանի գետաբերանից մինչև նեղ ու կարճ Գայլի դրոնք հովիտը:

Նախատեսվող գործունեության վայրը գտնվում է տափարակ հարթության վրա: Այն նախալեռնային անապատային գոտի է, որը զբաղեցնում է Արարատյան դաշտի ցածրադիր տեղամասերը, մինչև 900 մ բարձրությունները: Տարածաշրջանի բնական կամ ֆիզիկաաշխարհագրական չափանիշներն են գետավազանի ռելիեֆը, գետային հոսքերի հիմնական միախառնման հանգույցները և հիդրոլոգիական ցուցանիշները:


Տարածաշրջանի երկրաբանությունը

Տարածաշրջանն ունի բարդ տեկտոնական և երկաբանահիդրոերկրաբանական կառուցվածք: Երկրաբանական կառուցվածքի ծածկույթը, որը ունի շուրջ 500 մ հաստություն, ներկայացված է չորրորդական հասակի լճագետային նստվածքներով և հրաբխային անդեզիտաբազալտային լավաներով: Նրանում, հիդրոերկրաբանական տեսակետից, ավազա-կավճա-գլաքարային ապարների հերթափոխումը՝ մուգ շագանակավուն և կապտականաչավուն երկու ջրամերժ կավերի տարածուն շերտերով, ստեղծում է բարենպաստ պայմաններ ջրատար հորիզոնների համակարգի (համալիրի) ձևավորման համար:

Նախատեսվող գործունեության վայրի արևելյան մասը եզրավորվում է Գեղամա, Երանոսի և Ուրծի լեռնաշղթաներով: Արևմուտքում գոգավորությունը հարում է Կարսի սարահարթին: Գոգավորությունը եզրավորող լեռնազանգվածների երկրաբանական կառուցվածքում մասնակցում են վերին պրոտերոզոյ-քեմբրիի այլափոխված (մետամորֆիզացված) թերթաքարերը, պալեոզոյի (դևոն-պերմ) կարբոնատային ապարները, մեզոզոյի (տրիաս, վերին կավիճ) կավավազաքարային և

կրաքարամերգելային գոյացումները, պալեոգենի և ստորին միջին նեոգենի ծովային ֆացիայի նստվածքները, որոնք ինտենսիվ ծալքավորված են և կան տարբեր կազմի և հասակի ինտրուզիվ մարմիններով: Վերոհիշյալ ապարների տարբեր հատվածների վրա խիստ աններդաշնակ, գրեթե հորիզոնական տեղադրված են վերին պլիոցեն-չորրորդական հասակի անդեզիտա-բազալտային կազմի լավաների ծածկոցներն ու հոսքերը, հրաբխային խարամները, մոխիրը, պեմզաները, ինչպես նաև լճագետային և ցամաքային փուխրաբեկորային գոյացումները: Պլիոցեն-չորրորդական գոյացումների համալիրը ծալքավորված չի, տարածված է գոգավորությունը եզրավորող լեռնազանգվածներում (լավաները, նրանց հրաբեկորային տարբերակները) և միջլեռնային գոգավորություններում (լճագետային նստվածքներ): Լավային ապարները ինտենսիվ ճեղքավորված ու ծակոտկեն են, իսկ լճագետային նստվածքները ներկայացված են կտրվածքում հերթափոխվող կավային և ավազազլաքարային շերտերով: Արարատյան միջլեռնային գոգավորության երկրաբանական վերին հարկը ներկայացված է վերոհիշյալ լճագետային նստվածքներով, որոնք պարփակում են գոգավորությունում լճային ռեժիմի ժամանակ Մեծ և Փոքր Արարատների, Արագածի, Արա լեռների հրաբուխներից արտավիժած լավային միջֆորմային հոսքերի ձևով: Վերջինները հանդիսանում են լեռնավանդակի լավային ծածկույթի ստորերկրյա ջրերի գոգավորություն տեղափոխող ուղիներ:

Նախատեսվող գործունեության վայրի տեղադիրքը լեռնաշղթայի համակարգում



Պայմանական նշաններ

- 18** - Գեղամի լեռնաշղթա (140 կմ), ամենաբարձր կետը՝ Աժդահակ (3597 մ)
19 - Երանոսի լեռնաշղթա (40 կմ), ամենաբարձր կետը՝ Հանդասար (2239 մ)
20 - Ուրծի լեռնաշղթա (20 կմ), ամենաբարձր կետը՝ Ուրծ (2446 մ)

- - Նախատեսվող գործունեության վայրը
 ● - լեռնաշղթայի ամենաբարձր կետը

Ջրային ռեսուրսներ Հիդրոէկրաբանություն

Նախատեսվող գործունեության տարածաշրջանի Արարատյան գետահովիտը հանդիսանում է Արարատյան արտեզյան ավազանի ստորերկրյա ջրերի կուտակման և բեռնաթափման մարզը: Այն գտնվում է Արաքս գետի ավազանի միջին հոսանքում և ձգվում է հյուսիս-արևմուտքից հարավ- արևելք՝ շուրջ 120 կմ երկարությամբ և 10-30 կմ լայնությամբ: Գտնվում է 800-1000 մ բացարձակ նիշերի սահմաններում, զբաղում է շուրջ 1300 կմ² մակերես և իրենից ներկայացնում է ստորերկրյա ջրերի շտեմարան, ուր 42 ջրերը մուտք են գործում դաշտավայրը եզրավորող Արարատի և Արա- գածի, Գեղամա, Ուրցի ու Հայկական պար լեռնաշղթաներից: Տարածաշրջանում Այստեղ ապարները ներկայացված են հնահրաբխային էֆուզիաներով (բազալտներ, անդեզիտա-բազալտներ, դագիտներ, խարամներ)՝ Գոլորշիացումը գերազանցում է մթնոլորտային տեղումներին:

Արարատյան դաշտը իրենից ներկայացնում է միջլեռնային իջվածք, որը կապված է Արաքս գետի հետ իր ձախափնյա՝ Ախուրյան, Քասախ, Սևջուր (Մեծամոր), Հրազդան, Ագատ, Վեդի վտակներով, որոնց արտաբերման կոներով և լավատակ հնահուններով էլ տեղի է ունենում դաշտավայրի ստորերկրյա ջրերի սնումը: Գրունտային ջրատար

հորիզոնի ապարները ներկայացված են կավավազներով, ավազակավերով և կավերով տարբեր հատիկայնության ավազների և կոպիճների մեծ հզորության ենթաշերտերով և ոսպնյակաձև առաջացումներով: Գրունտային ջրերի սնումը հիմնականում կատարվում է իրենցից ներքև տեղադրված ճնշումային ջրերի ուղղաձիգ բեռնաթափման, ինչպես նաև ռոտզման, ռոտզման ջրանցքներից ջրային կորուստների և գետային ջրերի ինֆիլտրացիայի հաշվին: Բեռնաթափումը կատարվում է գետային ցանցում, կոլեկտորադրենաժային ցանցերում և ծախսվում է գոլորշիացման վրա: Նշված գործոնների ազդեցությամբ և փոխհարաբերությամբ էլ ձևավորվում է գրունտային ջրերի ռեժիմը: Թույլ ճնշումային ջրատար հորիզոնը ներկայացված է ավազա-կոպճազլաքարային նստվածքներով և կավերի փոփոխական հաստության ոսպնյակաձև առաջացումներով: Թույլ ճնշումային ջրերը մեծամասամբ զուրկ են դրական ճնշումից, սակայն ամենուրեք բարձր են կանգնում գրունտային ջրերի մակարդակից: Ուժեղ ճնշումային ջրատար հորիզոնը տեղադրված է կապտականաչավուն կավերի շերտի տակ: Այս ջրատար հորիզոնի ջրերն ունեն դրական պիեզոմետրիական մակերևույթ, որը հարթավայրի եզրամասերից դեպի կենտրոն մեծանում է հասնելով 20 և ավելի մետրի: Նախատեսվող գործունության վայրը գտնվում է Արարատյան արտեզիան ավազանի գետա-լճային և լավային հոսքերի ճնշումային ջրատար համալիրի մեջ, որտեղ գերակշռում են կավավազային, ավազային, գլախարային, բազալտային և անդեզիտա-բազալտային ապարները:

Արարատյան գոգավորության սիսեմատիկ հիդրոերկրաբանական քարտեզ



Հայցվող տեղամասի շրջանի հիմնական ջրային երակը Վեդի գետն է, Արաքսի ձախակողմյան վտակը: Սկիզբ է առնում Դահնակի լեռնաշղթայի ու Գնդասարի լեռնազանգվածի միջև գտնվող Մժկատար լեռների հյուսիսահայաց լանջերից՝ մոտ 2700մ բարձրություններից: Սկզբում հոսում է դեպի հյուսիս-արևմուտք, հետո ընդհանուր ուղղությունը արևմտյան է: Այս ընթացքում գետը ունի լեռնային բնույթ: Այնուհետև գետահովիտը լայնանում է, հոսքի ուղղությունը թեքվում դեպի հարավ-արևմուտք: Ի վերջո գետը դուրս է գալիս Արարատյան դաշտ ու թափվում Արաքսը: Երկարությունը մոտ 58կմ է, ջրահավաք ավազանի մակերեսը 633կմ²: Ձախակողմյան խոշոր վտակը Շաղափն է: Աջակողմյան՝ 10կմ-ը գերազանցող վտակները չորսն են, որոնցից մեկը Խոսրովն է: Սնումը հիմնականում ձնանձրևային է, հորդացումը գարնանը: Վեդի գետը հոսում է հայցվող տարածքից մոտ զգալի հեռավորության վրա: ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից Վեդի գետի ջրերի մոնիթորինգ իրականացվում է Ուրցաձոր բնակավայրից վերև և Արարատ քաղաքից ներքև՝

Մակերևութային ջրերի որակի և քանակի մոնիթորինգի դիտացանց




Սեյսմատեկտոնիկ և սողանքային պայմաններ

Հայաստանի տարածքը բնորոշվում է ուժեղ զարգացած սողանքային շարժընթացներով: Հայաստանի տարածքում գոյություն ունեն 2000-ից ավելի խոշոր սողանքներ (մոտ 500 կմ² տարածք), որոնցից շատերը գտնվում են բնակավայրերի սահմաններում: ՀՀ տարածքի սողանքային տեղաշարժերի տեսակները շատ հաճախ տարանջման ընթացքում փոխակերպվում են փլվածք-սահք-հոսք սխեմայով ժամանակակից և անցյալի ակտիվությամբ սողանքային շարժընթացների

մեծամասնությունը կապված է ակտիվ խզումնային գոտիների հետ, որոնց միջոցով տեղի են ունենում դանդաղ և երկրաշարժածին տեղաշարժեր:

Մարզի առկա են սողանքային գոտիներ, որոնց տարածքները կազմում են հանրապետության սողանքային հողատարածքների 2.5%-ը: Արարատի մարզի տարածքում սողանքային երևույթները զարգացած են հիմնականում հյուսիս-արևելյան մասի նախալեռնային բնակավայրերում: Մարզը գտնվում է ոչ ակտիվ սեյսմիկ գոտում և սողանքների ակտիվացումը հիմնականում կրում է սեզոնային բնույթ և առաջանում է հիմնականում գրունտային զանգվածների գրավիտացիոն տեղաշարժով: Նախատեսվող գործունեության վայրում սողանքային գոտիները բացակայում են: Ստորև **Նկար**ում ներկայացված է սողանքային գոտիների և նախատեսվող գործունեության վայրի տեղադիրքը: Նախատեսվող գործունեության տարածաշրջանի սեյսմատեկտոնական պայմանները բարենպաստ են: Գրունտների առավելագույն արագացումները տատանվում են 0.2-ից մինչև >0.25 g, որը համապատասխանում է 8-8.25 բալի: Նախատեսվող գործունեության տարածաշրջանում կան սողանքային գոտիներ, սակայն բուն նախատեսվող գործունեության վայրում այդ սողանքային գոտիները բացակայում են: Ստորև **Նկար**ում ներկայացված է նախատեսվող գործունեության վայրի սեյսմիկ և սելավային ռիսկերի, ինչպես նաև սողանքային գոտիների առկայությունը:

Նախատեսվող գործունեության վայրի սեյսմիկ և սելավային ռիսկերը




Տարածաշրջանի հողերի նկարագիրը

Արարատյան հարթավայրում առավել ցածրադիր տեղերում ձևավորվել են հումուսով աղքատ գորշ հողեր՝ բաց գորշագույն հողեր ու տիպիկ գորշահողեր՝ աղակալած տարածքներով: Անապատի համար բնորոշ այս հողերի առաջացմանը նպաստել են կլիմայի չորությունը և բուսական ծածկույթի աղքատությունը: Նախատեսվող գործունեության տարածքի հողերը պատկանում են մուգ շագանակագույն հողերի տիպին:

Մուգ շագանակագույն հողերը մակերեսից ունենում են մուգ, երբեմն գորշավուն երանգավորում: Կուլտուրականացված շագանակագույն հողերը ձևավորվում են նախալեռնային հարթությունների վրա, տարբերվում են համեմատաբար հզոր հումուսային հորիզոնով (50-70 սմ) թույլ դիֆերենցված համասեռ պրոֆիլի կառուցվածքով: Հին ոռոգելի հողատեսքերը հիմնականում լվացված են և առանձնանում են որոշակի խտացվածությամբ: Այս հողերը բնութագրվում են խայտաբղետ մեխանիկական կազմով, որը պայմանավորված է ռելիեֆի լիտոլոգիական պայմաններով, ինչպես նաև ներհողային հողմնահարման և ոռոգման ազդեցություններով: Հողերի ձևավորման համար հիմք են հանդիսացել կարծր ապարների հողմնահարման նյութերը, որոնք առանձնանում են ապարների բեկորային բարձր պարունակությամբ:

Ստորև նկարում ներկայացված է նախատեսվող գործունեության վայրի (բարձրությունը ծովի մակարդակից 860մ) հողային կատեգորիան:




Նախատեսվող գործունեության վայրի հողերի կատեգորիան

Մթնոլորտային օդի բնութագիր


«Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից մթնոլորտն աղտոտող նյութերի պարունակությունները որոշելու համար դիտարկումներ են կատարվում Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Ծաղկաձոր, Չարենցավան, Կապան և Քաջարան քաղաքներում: Ընդհանուր առմամբ վերը թվարկված բնակավայրերում գործում է 15 անշարժ՝ ակտիվ նմուշառման դիտակայան, և 214 շարժական՝ պասիվ նմուշառման դիտակետ: Շրջակա միջավայրի պետական մոնիթորինգի համակարգի շրջանակներում մթնոլորտային օդի մշտադիտարկման մոտակա կայանը գտնվում է Արարատ քաղաքում: Մթնոլորտն աղտոտող նյութերի պարունակությունները որոշելու համար 2024 թվականի մայիս ամսվա դիտարկումներ կատարվել են Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Ծաղկաձոր, Չարենցավան, Կապան և Քաջարան քաղաքներում: Ընդհանուր առմամբ վերը թվարկված բնակավայրերում գործում է 15 անշարժ՝ ակտիվ նմուշառման դիտակայան, և 214 շարժական՝ պասիվ նմուշառման դիտակետ: Փոշու մայիս ամսվա միջին ամսական կոնցենտրացիան գերազանցել է ՍԹԿ ն Արարատ քաղաքում՝ 1,1-ական անգամ, իսկ Գյումրի քաղաքում՝ աննշան (Կլիման և օդերևութաբանական պայմանները


Մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտացանց






Ծմբի և ագուտի երկօքսիդների մայիս ամսվա միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ն՝





Արարատ քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Քաղաքում գործում է 1 անշարժ դիտակայան և 12 շարժական դիտակետ: 2026թ Մարտ ամսվա ընթացքում մթնոլորտային օդում փոշու օրական կոնցենտրացիան գերազանցել է ՄԹԿ-ը 1.1–2.3 անգամ՝ 15 օր:



Արարատ քաղաքի մթնոլորտային օդում փոշու կոնցենտրացիանները

2025 թվականին Արարատ քաղաքում գործող մոնիթորինգի կայանում տարվա ընթացքում փոշու օրական կոնցենտրացիան գերազանցել է սահմանային թույլատրելի կոնցենտրացիան 1.1-4.5 անգամ: Հայցվող տեղամասում մթնոլորտային օդի որակի մշտադիտարկում չի կատարվում, մթնոլորտային օդում վնասակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաները ներկայացվում են համաձայն ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի» կենտրոն ՊՈԱԿ-ԻՅ₉

Ժամանակավոր առաջարկությունների:

Բնակչության քանակը (հազար մարդ)	Ֆոնային կոնցենտրացիաները (մգ/մ³)			
	փոշի	ծծմբի երկօքսիդ	ազոտի երկօքսիդ	ածխածնի օքսիդ
50 -100	0.098	0.007	0.034	1.3
10-50	0.095	0.006	0.033	1.1
<10	0.071	0.006	0.023	0.8

Ազդակիր Միսյան բնակավայրի բնակչությունը կազմում է 10 000 մարդուց քիչ, հետևաբար այդ տարածքի համար մթնոլորտային օդի ֆոնային աղտոտվածությունը ընդունվում է. փոշի 0.071մգ/մ³, ծծմբի երկօքսիդ 0.006մգ/մ³, ազոտի երկօքսիդ 0.023մգ/մ³ և ածխածնի օքսիդ 0.8մգ/մ³:

Կլիմա

Միսյան գյուղը գտնվում է ծովի մակարդակից ունի 860 մ բարձրության վրա: Կլիման չոր խիստ ցամաքային է: Ձմեռները սկսվում են դեկտեմբերի կեսերին, իսկ ամառը տևական է՝ մայիսից մինչև հոկտեմբեր: Հաճախ լինում են խորշակներ, որոնք զգալի վնաս են հասցնում գյուղա-տնտեսությանը: Բնական լանդշաֆտները կիսանապատներ են, որոնք ոռոգման արդյունքում վեր են ածվել կուլտուր-ոռոգելի լանդշաֆտի: Ագրոկլիմայական տեսակետից համայնքն ընկած է բացարձակ ոռոգման գոտում:

Ջերմաստիճանը

Տարածաշրջանում օդի բացարձակ նվազագույնը աստիճանը -28,9 °C է: Բացարձակ առավելագույն ջերմաստիճանը կազմում է 42,6°C;

ՕԴԻ ՄԻՋԻՆ ԵՎ ԷՔՍՏՐԵՄԱԼ ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԸ,
ՁՄՈՒՆ ՍԿԻՋԲԸ, ՎԵՐՋԸ ԵՎ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Աղյուսակ 1 Օդի միջին ջերմաստիճան

Բնակավայրի անվանումը		Միջին ջերմաստիճանն ըստ ամիսների, °C												Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
7.	Արտաշատ	-3.5	-0.5	6.0	12.8	17.5	21.8	25.5	24.9	20.0	13.1	6.0	-0.4	11.9	-28.9	42.6

Աղյուսակ 3 Օդի միջին առավելագույն (մ. ա.) և միջին նվազագույն (մ. ն.) ջերմաստիճանը

Բնակավայրի անվանումը		մ. ա / մ. ն.	ըստ ամիսների, °C												ընկ
			Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
7.	Արտաշատ	մ. ա.	1.9	5.6	13.0	19.9	24.8	29.7	33.4	33.1	28.8	21.5	13.1	5.0	19.1
		մ. ն.	-7.1	-4.7	0.6	6.6	10.9	14.4	18.1	17.1	12.2	6.4	0.9	-3.9	6.0

Աղյուսակ 4 Օդի դիտված բացարձակ առավելագույն (ա) և նվազագույն (ն) ջերմաստիճանը

Բնակավայրի անվանումը	ա/ն	ըստ ամիսների, °C												Տարեկան
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
7. Արտաշատ	ա	19.5	21.8	27.9	33.7	35.1	39.3	42.6	41.4	39.3	32.1	25.1	22.1	42.6
	ն	-28.9	-28.7	-27.2	-9.0	-0.6	3.3	4.5	8.0	-0.2	-5.5	-16.0	-27.3	-28.9

ՕԴԻ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԽՈՆԱՎՈՒԹՅՈՒՆԸ

Աղյուսակ 10 Օդի հարաբերական խոնավությունը

Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %																	
	ըստ ամիսների												Միջին տարեկան	Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		
														Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին	Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր						
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	
7. Արտաշատ		78	73	63	59	59	54	52	52	57	67	75	79	64	78	62	52	35

ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՏԵՂՈՒՄՆԵՐԸ

Աղյուսակ 12 Մթնոլորտային տեղումները

Բնակավայրի անվանումը	միջին ամսական Տեղումների քանակը _____ մմ օրական առավելագույն													Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ	Տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին, մմ
	ըստ ամիսների												Տարեկան		
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
7. Արտաշատ	18	18	26	36	39	23	11	6	10	22	23	17	249	102	147
	18	20	32	36	43	34	27	25	28	36	38	22	43		

ՔԱՍՐ

Աղյուսակ 15 Քամի (արդիականացման ենթակա)

Բնակավայրի անվանումը	Ամիսներ	Կրկնելիությունը, % Միջին արագությունը, մ/վ								Ըստ ուղղությունների	Անդորրի կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Գերակշռող ուղղությունը հունիս - օգոստոս ամիսներին	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հուլիսին, մ/վ	Գերակշռող ուղղությունը դեկտեմբեր - փետրվար ամիսներին	Միջին արագություններից առավելագույնը ըստ ուղղությունների հունվարին, մ/վ
		Հյուսիսային	Հյուսիս-արևելյան	Արևելյան	Հարավ- արևելյան	Հարավային	Հարավ-արևմտյան	Արևմտյան	Հյուսիս- արևմտյան							
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	
8. Արտաշատ	հունվար	7	8	10	20	12	10	15	18	88	0.3	ՀվԱրլ	2.0	ՀվԱրլ	3.1	
		1.7	1.7	2.7	3.1	2.4	2.0	2.2	1.7							
	ապրիլ	4	9	12	27	13	8	13	14	74	0.6					
		1.7	1.8	2.1	2.8	2.5	2.8	2.8	2.6							
	հուլիս	8	7	9	16	9	9	18	24	80	0.4					
		1.7	1.9	1.7	2.0	2.0	2.0	2.7	2.3							
	հոկտեմբեր	7	12	12	19	8	10	16	16	85	0.3					
		1.6	1.5	2.1	2.0	1.5	2.1	2.4	2.0							

ՁՅԱՆ ԾԱԾԿՈՒՅԹ


Աղյուսակ 14 Ձյան ծածկույթ (արդիականացման ենթակա)

Բնակավայրի անվանումը	Ձյան ծածկույթը			
	Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Ձյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ	Գրունտի սառչման առավելագույն խորությունը, սմ
1	2	3	4	5
14. Արտաշատ	40	36	46	41


Քամի

Դիտարկվող տարածքում քամու միջին արագությունների բաշխվածությունը տարվա տարբեր ժամանակաշրջաններում բերված են **Նկարում**:

Քամու ուղղությունների կրկնելիության պատկերները բերված են **Նկարում**: Ինչպես երևում է Նկար-ից դիտարկվող տարածքում գերակշռում են հարավ-արևելյան ուղղությամբ քամիները:



Քամու միջին արագությունների բաշխվածությունը



Քամու ուղղությունների կրկնելիությունը

Նախատեսվող գործունեության տարածաշրջանի բուսական աշխարհը

Արարատի մարզը համարվում է ՀՀ-ում տնտեսապես ամենազարգացած մարզերից մեկը: Առավելապես կարևորվում է մարզի գյուղատնտեսական նշանակությունը Ունենալով Արարատյան դաշտի մի մեծ հատված՝ այստեղ է մշակվում ՀՀ գյուղատնտեսական մշակաբույսերի զգալի մասը՝ Մարգում զարգացած է երկրագործությունը: Հիմնական պտղատու այգիներն են խաղողի, ծիրանի, դեղձի այգիները, մշակվում են նաև կեռաս, սալոր, խնձոր, տանձ և այլն: Մարզի հիմնական մշակաբույսերն են ձմերուկը, սեխը, լոլիկը, վարունգը, լոբին, սիսեռը, կանաչ պղպեղը, սմբուկը և ցորենազգիների դասին պատկանող բույսերը:

Նախատեսվող գործունեության տարածաշրջանում գերակշռում են անապատային հողերը: Ավելի տարածված են հալոֆիլ և գիպսոֆիլ անապատները: Անապատի բուսականությունը աղքատ է: Աճում են չորասեր, աղասեր բուսատեսակներ, խոնավ վայրերում եղեգն: Նախալեռնային կիսաանապատային գոտու գորշահողերի վրա աճում են ֆրիգանտիդային չորասեր բույսեր, էֆեմերներ, հոտավետ օշինդրը և այլն:

Հալոֆիլ անապատներին բնորոշ բույսերն են՝ սոլերոս (*Salicornia europaea*), կալիդիում (*Kalidium caspicum*), աղահասկ (*Halostachys caspica*), բորակաբույս (*Nitraria schoberi*): Հալոֆիլ համակեցությունների հետ է կապված էնդեմիկ տեսակ՝ արարատյան որդան կարմիրի (*Porphyrophora hammelii*) գոյությունը, որը զարգանում է հիմնականում որդանախոտի (*Aeluropus littoralis*) արմատների վրա:

Գիպսոֆիլ անապատները բնորոշ են արաքսյան հարթավայրը շրջապատող լեռնաշղթային (Երանոս, Երախ, Ուրց): Գիպսոֆիլ անապատներին բնորոշ բույսեր են՝ սապնարմատ (*Gypsophila*) ցեղի ներկայացուցիչները, հալանտիումը (*Halanthium rarifolium*), մոլոկան Թախթաջյանի (*Lactuca takhtadzhianii*), զուգատերև (*Zygophyllum atriplicoides*) և այլն: Տարածաշրջանում հանդիպում են նաև՝ գեղածնկիկ մատիտեղանման (*Calligonum polygonoides*), հազարատերևուկ նեղատերև (*Achillea tenuifolia*), եղջերախոտ, եղնաբղեղ ավազուտային (*Ceratocarpus arenarius*), գեյդիլիցիա ծաղկավոր (*Seidlitzia florida*): Աճում են նաև այլ չոր բույսեր՝ տերեփուկ, երիցուկ, իշակաթնուկ:

Նախատեսվող գործունեության տարածաշրջանում հանդիպող՝ ՀՀ կարմիր գրքում և ԲՊՄՄ Կարմիր ցուցակում գրանցված բուսատեսակների՝ ցուցակը բերված է ստորև **Աղյուսակում**, իսկ դրանց լուսանկարները՝ **Նկարում**:

Նախատեսվող գործունեության տարածաշրջանում հանդիպող՝ ՀՀ Կարմիր գրքում ընդգրկված հազվագյուտ, անհետացող բուսատեսակները

№	Բուսատեսակներ		ԲՊՄՄ-ի Կարմիր ցուցակում ունեցած կատեգորիան ²
	Հայերեն	Լատիներեն	
1	Խնկեղեգ ճահճային	<i>Acorus calamus</i> L.	EN
2	Հացհամեմ գլխիկավոր	<i>Trigonella capitata</i> Boiss.	EN
3	Հիրիկ մուսուլմանական	<i>Iris musulmanica</i> Fomin	EN
4	Կղմուխ Օշեի	<i>Inula aucheriana</i> DC.	EN
5	Բիեներցիա շուրջաթև	<i>Bienertia cycloptera</i> Bunge	CR
6	Միկրոկնեմում մարզանանման	<i>Microcnemum coralloides</i>	EN



Խնկեղեգ ճահճային - *Acorus calamus* L.



Հացհամեմ գլխիկավոր - *Trigonella capitata* Boiss.

¹ Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գիրք

² EN (*Endangered*) - վտանգված տեսակ


CR (*Critically Endangered*) - կրիտիկական վիճակում գտնվող տեսակ



Հիրիկ մուսուլմանական - *Iris musulmanica* Fomin



Կոմուխ Օշեի - *Inula aucheriana* DC.



Բիներցիա շուրջաթև - *Bienertia cycloptera* Bunge



Միկրոկնեմում մարգանսաման - *Microcnemum coralloides*

Նախատեսվող գործունեության տարածաշրջանում հանդիպող՝ ՀՀ Կարմիր գրքում ընդգրկված հազվագյուտ, անհետացող բուսատեսակների լուսանկարները

Նախատեսվող գործունեության տարածաշրջանի կենդանական աշխարհը

Նախատեսվող գործունեության տարածաշրջանի կիսանապատային ցամաքային էկոհամակարգի կենդանական աշխարհը բազմազան է, Հայաստանի կիսանապատային ցամաքային էկոհամակարգերում գրանցված է ողնաշարավոր կենդանիների 101 տեսակ (երկկենցաղների՝ 4, սողունների՝ 30, թռչունների՝ 23, կաթնասունների 44) և անողնաշար կենդանիների 1687 (այդ թվում՝ փափկամարմինների 59, սարդակերպերի 97, միջատների 1531): Նախատեսվող գործունեության տարածաշրջանում հանդիպում են անողնաշարավոր կենդանիներից 51, իսկ ողնաշարավորներից 92 տեսակ, Կիսանապատներում հանդիպում են բազմաթիվ էնդեմիկ անողնաշար տեսակներ, ներառյալ միջերկրածովային, իրանական, կովկասյան և դրիմյան ծագում ունեցողները: Աղուտային հալոֆիլ համակեցությունների հետ է կապված էնդեմիկ տեսակի՝ Արարատյան որդանի (*Porphiophora hamelii*) գոյությունը:

Տարածաշրջանում ողնաշարավոր կենդանիներից հանդիպում են հետևյալ

ներկայացուցիչները՝ գորշուկը, նապաստակը, ճահճակուղը, ժայռային մողեսը, լորտու սովորականը, դաշտամուկը, քարակգաքիսը և այլն: Անողնաշարավորներից հանդիպում են՝ անձրևավորողը, մրջյունը, ծղրիդը, ճոխը, մորեխը և այլն: Սողուններից հանդիպում են գյուրգա, հայկական իժ, լորտուներ, Արևմտյան վիշապիկը (*Eryx jaculus*) և այլն:

Թռչուններից հանդիպում են տնային ճնճուկը (*Passer domesticus*), մոխրագույն ագռավը (*Corvus corone*), անտառային արտույտը (*Lullula arborea*), գյուղական ծիծեռնակը (*Hirundo rustica*), եղինջաթռչնակը (*Troglodytes troglodytes*), ժայռային ծիծեռնակը (*Ptyonoprogne rupestris*):

Գետերի իխտիոֆաունան ներկայացնում են բրամը (*Abramis brama*), ծածանը (*Cyprinus carpio*), սովորական լոքոն (*Silurus glani*) և այլն:

Նախատեսվող գործունեության տարածաշրջանում հանդիպող՝ ՀՀ կարմիր գրքում և ԲՊՄՄ Կարմիր ցուցակում գրանցված կենդանատեսակների ³ ցուցակը բերված է ստորև Աղյուսակում, իսկ դրանց որոշների լուսանկարները՝ **Նկարում**:

Աղյուսակ Նախատեսվող գործունեության տարածաշրջանում հանդիպող՝ ՀՀ Կարմիր գրքում ընդգրկված հազվագյուտ, անհետացող կենդանատեսակները

№	Կենդանատեսակ		ԲՊՄՄ-ի Կարմիր ցուցակում ունեցած կատեգորիան ⁴
	Հայերեն	Լատիներեն	
1	Մեծաչք ճպուռ	<i>Lestes macrostigma</i>	VU
2	Սիմպեկմա ճպուռ	<i>Sympecma paedisca</i>	VU
3	Վան Բրինգի նետիկ	<i>Coenagrion vanbrinkae</i> Lohmann	DD
4	Սևծովյան ճպուռ	<i>Libellula pontica</i> Selys	NT
5	Ռուբենյանի բնդեղիկ	<i>Adoretus rubenyani</i> Kalashian	EN
6	Հսկա գիշաճանճ	<i>Satanas gigas</i> Eversmann	VU
7	Երկարաոտ սցինկ	<i>Eumeces schneideri</i>	VU
8	Վարդագույն հավալուսն	<i>Pelecanus onocrotalus</i> Linnaeus	VU
9	Մեծ ձկնկուլ	<i>Phalacrocorax carbo</i> Linnaeus	VU
10	Փոքր ձկնկուլ	<i>Phalacrocorax pygmaeus</i> Pallas	VU
11	Թռչան կարապ	<i>Cygnus olor</i>	VU
12	Ճչան կարապ	<i>Cygnus cygnus</i>	VU
13	Մոխրագույն սագ	<i>Anser anser</i>	VU
14	Կարմիր բաղ	<i>Tadorna ferruginea</i>	VU
15	Սպիտակաաչք սուգաբաղ	<i>Aythya nyroca</i>	VU
16	Ծվվան սագ	<i>Anser erythropus</i>	VU
17	Գիշանգղ	<i>Neophron percnopterus</i> Linnaeus	EN
18	Օձակեր արծիվ	<i>Circus gallicus</i>	VU

19	Տափաստանային մկնաճուռակ	Circus macrourus	EN
20	Եվրոպական ճնճռաճուռակ	Accipiter bre	VU
21	Տափաստանային արծիվ	Aquila nipalensis orientalis Hodgson	VU

³ Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գիրք

⁴ EN (*Endangered*) - վտանգված տեսակ, VU

(*Vulnerable*) - խոցելի տեսակ,

DD (*Data Deficient*) - տվյալների անբավարարություն և այլն

NT (*Near Threatened*) - Վտանգված տեսակին մոտ գտնվող

№	Կենդանատեսակ		ԲՊՄՄ-ի Կարմիր ցուցակում ունեցած կատեգորիան ⁴
	Հայերեն	Լատիներեն	
22	Բլրային արծիվ	<i>Aquila heliaca</i> Savigny	VU
23	Աղավնաբազե	<i>Falco columbarius</i> Linnaeus	DD
24	Փոքր ճագարամուկ	<i>Allactaga elater</i> Lichtenstein	EN
25	Սուլթանական հավ	<i>Porphyrio porphyrio</i>	DD
26	Կտցար կաճաղակ	<i>Haematopus ostralegus</i> Linnaeus	VU
27	Կրկնակտցար	<i>Gallinago media</i>	VU
28	Ոտնացուպիկ	<i>Himantopus himantopus</i>	VU
29	Բզակտուց	<i>Recurvirostra avosetta</i> Linnaeus	VU
30	Մարգագետնային ծիծառակտցար	<i>Glareola pratincola</i>	VU
31	Ներկարար	<i>Coracias garrulus</i>	VU
32	Կարմրակատար շամփրուկ	<i>Lanius senator</i>	VU
33	Սպիտակափող սոխակ	<i>Irania gutturalis</i>	DD
34	Հնդկական եղեգնաթռչնակ	<i>Acrocephalus agricola</i>	EN



Երկարաոտ սղիսկ - *Eumeces schneideri*



Մեծաչք ճպրուռ - *Lestes macrostigma*



Հսկա գիշաճանճ - *Satanus gigas* Eversmann



Օձակեր առծիվ - *Circaetus gallicus*



Փոքր ձկնկուլ - *Phalacrocorax pygmaeus* Pallas



Ներկարար - *Coracias garrulus*



Հնդկական եղեգնաթռչնակ - *Acrocephalus agricola*



Տափաստանային մկնաճուռակ - *Circus macrourus*



Մոխրագույն սագ - *Anser anser*




Սպիտակափող սոխակ - *Irania gutturalis*

Նախատեսվող գործունեության տարածաշրջանում հանդիպող՝ ՀՀ Կարմիր գրքում ընդգրկված հազվագյուտ, անհետացող կենդանատեսակներից որոշների լուսանկարները

Տարածաշրջանի հատուկ պահպանվող տարածքները

Նախատեսվող գործունեության վայրից դեպի հյուսիս-արևելք 15 կմ հեռավորության վրա գտնվում է "Խոսրովի անտառ" պետական արգելոցը, իսկ 17 կմ հեռավորության վրա՝ "Էրեբունի" պետական արգելավայրը Դեպի հարավ-արևելք 15 կմ հեռավորության վրա գտնվում է "Խոբ Կիրապ" պետական արգելավայրը, իսկ 22 կմ հեռավորության վրա՝ Գոռավանի ավազուտներ" պետական արգելավայրը:

Ստորև **Նկարում** ներկայացված է նախատեսվող գործունեության տարածաշրջանին մոտ գտնվող հատուկ պահպանվող տարածքները՝



Նախատեսվող գործունեության տարածաշրջանին մոտ գտնվող հատուկ պահպանվող տարածքները

"Խոսրովի անտառ" պետական արգելոցը հիմնադրվել է 1958 թվականին: Արգելոցը գտնվում է Արարատի մարզում Արարատյան դաշտի հարևանությամբ՝ Գեղամա լեռնաշղթայի լեռնաբազուկների, Երանոսի և Երախի լեռների վրա: Այն զբաղեցնում է 23213.5 հա տարածք, տեղակայված է ծովի մակարդակից 700-ից մինչև 2800 մ բարձրության վրա:

"Գոռավանի ավազուտներ" պետական արգելավայրը կազմավորվել է 1958թ-ին: Այն գտնվում է ՀՀ Արարատի մարզի Արարատյան գոգավորության նախալեռնային թեք հարթություններում՝ Գոռավան գյուղական համայնքի վարչական սահմաններում: Չունենալով պահպանություն իրականացնող մարմին և աշխատակազմ՝ 2007թ-ին արգելավայրը հանձնվել է «Խոսրովի անտառ» պետական արգելոց ՊՈԱԿ-ի ենթակայությանը:

"Խոր Վիրապ" պետական արգելավայրը կազմավորվել է 25.01.2007 թ.-ին: Այն գտնվում է Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Փոքր Վեդի գյուղական համայնքի վարչական սահմաններում, Արաքս գետի ձախակողմյան մասի Խոր Վիրապ եկեղեցական համալիրի և Հայաստանի հնագույն մայրաքաղաք Արտաշատի աջակողմյան հատվածում գտնվող՝ 50,28 հա խոնավ տարածքի վրա:

"Էրեբունի" պետական արգելավայրը գտնվում է Հայաստանի Հանրապետության Արարատի մարզում, Երևանից 8 կմ հարավ-արևելք: Կազմավորվել է 1981 թ.-ին՝

Էրեբունի վարչական շրջանի տարածքում, կիսաանապատային և լեռնատափաստանային գոտիների անցումային հատվածում՝ ծովի մակերևույթից 1300-1450մ բարձրություններում՝ դաշտավլուկազգիների վայրի ազգակիցների (մասնավորապես վայրի ցորենների աշխարհում եզակի գենոֆոնդի) պահպանության նպատակով:

Այժմ արգելավայրը զբաղեցնում է 120 հա տարածք:

Նախատեսվող գործունեության տարածաշրջանի համայնքների նկարագիրը և սոցիալ տնտեսական վիճակը

Մխչյան համայնքը գտնվում է Արարատի մարզում, ծովի մակերևույթից 860 մ բարձրության վրա՝ Արարատյան դաշտավայրում: Համայնքը սահմանակից է մարզի հետևյալ համայնքներին՝ Մրգավետ, Հովտաշեն, Դիմիտրով, Արաքսավան, Բյուրավան, Նշավան և Արևաբույր (տես **Նկարը**): Ստորև ներկայացված է Մխչյան բնակավայրի սոցիալ տնտեսական վիճակը:

Մխչյան համայնք

Մակերեսը՝ 598.47 կմ²,

Բնակչությունը՝ 5100 մարդ,

Բարձրությունը ծովի մակերևույթից՝

860 մ,

Հեռավորությունը մարզկենտրոն Արտաշատից՝ 10 կմ,

Մայրաքաղաք Երևանից՝ 20 կմ:

Գյուղը հիմնադրվել է 1828 թ.-ին Պարսկաստանի Խոյ և Սալմաստ գավառներից տեղահանված հայերով: Նախկինում այն կոչվել է Իմանշալու, 1935թ.-ից վերանվանվել է Մխչյան: Գյուղը ունի մոտ 120 տարեկան եկեղեցի, որը վերանորոգվել է և այժմ գործում է:

Համայնքի բնակչության մինչաշխատունակ տարիքի բնակիչները կազմում են 23%, աշխատունակները՝ 65%, հետաշխատունակները՝ 12%: Գյուղն ունի առկա 1304 տնտեսություն: Ունի 2 դպրոց, դրանցից առաջինը հիմնադրվել է 1883 թ.-ին, մանկապարտեզ, բուժկետ, կապի հանգույց: Արդյունաբերության ոլորտում զարգացած է սննդի արդյունաբերությունը: Համայնքում գործում է կոնյակի հումքի մշակման արտադրամաս: Համայնքի մոտ է կառուցված Մխչյանի ջրհան կայանը, որը Սև ջրի աղբյուրները և արտեզյան ջրերը մղում է Արտաշատի ջրանցք և դրանով ոռոգում տեղի գյուղատնտեսական հողահանդակները: Համայնքի տնտեսության մասնագիտա- ցման ճյուղը գյուղատնտեսությունն է, համախառն բերքի մեծ մասը

տալիս է բուսաբուծությունը: Գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են շուրջ 657 հա: Համայնքի հողերի հիմնական մասն օգտագործվում են որպես վարելահողեր, պտղատու և խաղողի այգիներ, Համայնքում բնակիչները զբաղվում են այգեգործությամբ, խաղողագործությամբ, դաշտավարությամբ, բանջարաբուծությամբ: Մշակում են ջերմասեր բանջարաբուստանային կուլտուրաներ, ինչպես նաև հացահատիկ: Զբաղվում են կաթնամսատու անասնապահությամբ, թռչնաբուծությամբ: Համայնքի հիմնախնդիրների մեջ կարևորվում է ոռոգման ջրի հիմնախնդիրը, գյուղատնտեսական մթերքների իրացումը, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը:

Պատմամշակութային և բնության հուշարձանները

ՀՀ Կառավարության 2002թ. հունվարի 24-ին թիվ 65-Ն որոշմամբ հաստատված՝ Արարատի մարզի հուշարձանների պետական ցուցակի համաձայն, Մխչյան համայնքի տարածքում կան թվով 3 պատմամշակութային հուշարձաններ, որոնք ներկայացված են ստորև **Աղյուսակում**:

Աղյուսակ 16. Մխչյան համայնքի պատմամշակութային հուշարձանները

Հուշարձանի անվանումը	Կառուցման տարեթիվը	Հասցեն	Նշանակությունը՝ հանրապետական/ տեղական	Հավելյալ նշումներ
Գերեզմանոց	19-20 դդ.	Խյուսիս-արևելյան եզրին	S	
Եկեղեցի Սբ. Հովհաննես	1890 թ.	Երկաթուղայինների փող.	S	
Հուշարձան Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին	1977 թ.	Գյուղի մոտ	S	քանդակագործ՝ Ֆ. Ասատրյան

ՀՀ Կառավարության 2008թ. օգոստոսի 14-ին թիվ 967-Ն որոշմամբ հաստատված՝ ՀՀ բնության հուշարձանների ցանկի համաձայն, Մխչյան համայնքում երկրաբանական հուշարձաններ չկան:

2.2 Թափոնների կառավարում

Արտաշատի տարածքում աղբահանության նպատակով բնակելի թաղամասերում տեղադրված են աղբահավաք տարողություններ և աղբարկղներ: Աղբահեռացումը կատարվում է կանոնավոր:

Շինարարական աշխատանքների ընթացքում, առաջացող թափոնատեսակներն են՝ Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի)/ծածակագիրը՝ 9120040001004/՝ 1,2տ, որը կհավաքվի աղբահավաք կոնտեյներներում և կտեղափոխվի մոտակա աղբավայր:

Կենցաղային աղբի ծավալը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$M=n*m$$

$m - 1$ հերթափոխում կենցաղային աղբի քանակը մեկ մարդու հաշվով՝ 120կգ/տարի

$n -$ աշխատողների թիվն է շինարարության փուլում՝ 10

$$M=10*120= 1200\text{կգ/տարի:}$$

Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չադտոտված հող (ծածկագիրը՝ 31401100 08 99 5) 67,674 խմ ծավալով /գրունտների հետլիցք 67,67խմ/:

Որևէ շինարարական աղբ չի առաջանալու, ողջ շինանյութերը պատրաստի չափսերով բերվելու է տարածք և հավաքվելու է տեղում:

Այլ վտանգավոր թափոններ, որոնք ենթակա են լիցենզավորված որևէ կազմակերպության հանձնման, չեն առաջանալու:

**3 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ
ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ
ՈՒՂԴՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ**

Բոլոր տիպի շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով պետական նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարական հրապարակը կազմակերպելիս Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից հաստատված դրույթներով, շինարարական հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը:

3.1 ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- փորման բեռնման աշխատանքների,
- հողային զանգվածների տեղափոխման,
- շինարարական տեխնիկայի շահագործման,
- բետոնային աշխատանքների հետ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Սույն ՇՄԱԳ-ում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների:

3.2 ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԱՂՔՅՈՒՐՆԵՐԸ

Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ, որոնց ցանկը բերված է ստորև՝

- փոշու արտանետումներ հիմքերի փորման ընթացքում
- վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ (CO, NO_x):

3.3 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

3.3.1 ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴ

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- շինարարական աշխատանքների /փոշեգոյացնող աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան,
- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգադրում:
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականացվի փակ ծածկով մեքենաներով.
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը:
- Շինարարական հրապարակը ցանկապատել:

3.3.2 ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,

3.3.3 ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- Շինարարական գործընացներում ներգրավված տեխնիկայից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ, ինչպես նաև ներգրավվի ժամանակակից տեխնիկական միջոցներ:
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն տեղական ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- Կանաչապատումը իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի, որը կներկայացվի Արտաշատի համայնքապետարանի բնապահպանության վարչության համաձայնեցմանը:
- Տարածքում (նախնական ցանկով) նախատեսվում է տնկել տարածաշրջանին բնորոշ վերը նշված բուսատեսակները:
- Կանաչապատ տարածքների ոռոգման ցանցը նախատեսվում է կաթիլային:
- Նախատեսվող կանաչապատման աշխատանքների համար անհրաժեշտ կլինի բուսահողի լիցք մոտ 100իսմ, որի ձեռքբերումը, տեղափոխումը և օգտագործումը կիրականացվի գործող օրենսդրության պահանջներին համապատասխան՝ նախապես համաձայնեցվելով Արտաշատ համայնքապետարանի հետ: Կանաչապատ տարածքների ոռոգումը իրականացվելու է հարևանությամբ անցնող ոռոգման

/դրենաժային/ ցանցից՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ շինարարության ժամկետը սահմանված է շինարարության տրամադրումից հետո 24 ամիս, նշված հարցը կհստակեցվի մոտ 24 ամիս հետո:

- Նախատեսվում է առաջնորդվել հետևյալի դրույթներով՝ ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի՝ <<Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմին>>:

3.3.4 ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Բուսական աշխարհի պահպանության միջոցառումները

Անհետացման վտանգի տակ գտնվող, հազվագյուտ, պահպանության կարիք ունեցող բուսատեսակներին վնաս չի հասցվի, քանի որ նախատեսվող գործունեությունը իրականացվելու է ճանապարհին կից հատվածում, որը երկար տարիների ընթացքում արդեն իսկ ենթարկվել է անտրոպոգեն ազդեցությունների և որտեղ կենսաբազմազանությունը գրեթե բացակայում է:

Տարածքում հողի բերրի շերտը բացակայում է:

- Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքի մաքրում աղբից: Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի) թափոնը տեղափոխվելու է տեղական մարմինների կողմից հատկացված աղբավայրեր:

Կենդանական աշխարհի պահպանության միջոցառումներ

Ամենամեծ ազդեցությունը կարտահայտվի հողային աշխատանքների ժամանակ դրանց բների ոչնչացմամբ: Սակայն կենդանիները այդ դեպքում առանց մեծ կորուստների կից տարածքներում կգտնեն նոր բների և բնակավայրերի լայն հնարավորություններ:

Կենդանական աշխարհի վրա հնարավոր ազդեցությունը նվազագույնի հասցնելու նպատակով ամենաինտենսիվ շինարարական աշխատանքները կիրականացվեն

ձվադրման և բնադրման ժամանակաշրջանից (ապրիլ-մայիս) դուրս:

Ընդհանուր առմամբ, շինարարական աշխատանքները կկրեն լոկալ և ժամանակավոր բնույթ, ինչի շնորհիվ կենդանիներին հասցվող վնասը կլինի նվազագույն: Շինարարական աշխատանքների բնույթը և մասշտաբը այնպիսին են, որ նրանք իրենց փոքրածավալության պատճառով չեն կարող արգելել կենդանական աշխարհի ներկայացուցիչների սեզոնային միգրացիայի կամ ջուր խմելու ճանապարհները:

3.3.5 ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝

- Հրդեհի առաջացումը
- Հեղուկ նյութերի արտահոսքը
- Աշխատողների վնասվածքները
- Շահագործվող տեխնիկայի հետ վթարները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների սկիզբը ոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը:
- հակահրդեհային անվտանգության միջոցառումների ապահովման նպատակով տարածքում նախատեսվում է հրշեջ հիդրանտի տեղադրում):
- Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հագեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղ-արկղիկով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:
- Շինարարական աշխատանքների ժամանակ՝

ա) մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից /ինչը հանդիսանում է կենցաղային աղբի կազմում թուղթը,

պոլիէթիլենե տոպրակներ և այլն/ և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,

բ) հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ,

գ) շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:

- Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:

- Բոլոր աշխատողներին տրվելու են անհատական պաշտպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:

- Նախատեսվող ջերմային տնտեսությունում առկա վտանգավոր օբյեկտները «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով կներկայացվեն տեխնիկական անվտանգության փորձաքննությունների:

- Անվտանգության նկատառումներից ելնելով շինհրապարակում կտեղադրվեն կողմնակի անձանց մուտքը արգելող նշաններ, և շինհրապարակը կապահովվի լուսավորությամբ:

- Իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքում ղեկավարվել Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով:

Ըստ նախնական գնահատման, ապահովվելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների և առողջապահական ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և

արդյունավետ հակազդել դրանց:

3.3.6 ԱՂՄՈՒԿԻ և ԹՐԹՈՒՄՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է համաձայն՝ ՀՀ Առողջապահության նախարարի 2002թ. մարտի 6-ի՝ «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» N2-III-11.3 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ N2-III-11.3 ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 138 հրամանի և ՀՀ Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ՀՀՇՆ 22-04-2014 «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՂՄՈՒԿԻՑ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 82 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ N79-Ն հրամանի պահանջներին համապատասխան: Ավտոմեքենաների և սարքավորումների աշխատատեղերում աղմուկի մակարդակը 80 դԲ (A) գերազանցելու դեպքում աշխատողները պետք է օգտագործեն անհատական պաշտպանական միջոցներ (գլխարկներ, ականջակալներ և այլն): Բնակավայրերի համար աղմուկի սահմանված թույլատրելի մակարդակը ցերեկային ժամերի համար կազմում է 55 դԲ (A), կամ ֆոնային մակարդակի ոչ ավել քան 3 դԲ (A) ավելացում: Հաշվի առնելով շինարարական աշխատանքների կարճաժամկետ բնույթը, աշխատակիցների վրա աղմուկի ազդեցությունը կրելու է կարճատև և ժամանակավոր բնույթ: Շինարարության ընթացքում շին հրապարակում աշխատելու են տարբեր մեքենաներ և մեխանիզմներ, որոնց աղմուկի մակարդակի գումարային ազդեցությունը հնարավոր է գերազանցի սահմանված նորմերը: Սակայն դա լինելու է ոչ անընդմեջ, ժամանակավոր: Շինարարական աշխատանքները կատարվելու են ցերեկային ժամերին: Աղմուկի մակարդակը նվազեցնելու նպատակով ՇՄԱԳ-ում նախատեսվում են համապատասխան բնապահպանական միջոցառումներ, որոնց կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը շինհրապարակին հարակից տարածքում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը: Շինարարության փուլում աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- կառուցապատման տարածքում ձայնակլանիչ նյութերի և կոնստրուկցիաների կիրառում,
- շինարարական աշխատանքներում ներգրավվելու են ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ,
- տրանսպորտային միջոցները և սարքերն օգտագործել սարքին վիճակում,
